Ինտերնետ-բանկ
համակարգով բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկման
կանոններին միանալու մասին (ֆիզիկական անձանց համար)

ԴԻՄՈՒՄ – ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ***(ֆիզիկական անձանց հետ կնքելու համար)***

Ինտերնետ-բանկ համակարգով բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկման կանոններին միանալու մասին (հետայսու Դիմում-պայմանագիր)

Խնդրում եմ տրամադրել ինտերնետ-բանկ համակարգ՝ իմ անունով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ-ում գործող հաշիվների էլեկտրոնային սպասարկման համար՝ դիտելու և գործողություններ կատարելու հնարավորությամբ.

Նույնականացումն ապահովող ծածկագրերի՝ (տոկեն) ստացման համար խնդրում եմ տրամադրել OAUTH 2.0 արձանագրությամբ աշխատող ծրագրային ապահովում

Ստորագրելով սույն Դիմում–պայմանագիրը հավաստում եմ որ.

- քաղաքացիական օրենսգրքի 444 հոդվածով նախատեսված կարգով միանում եմ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի (հետայսու՝ Բանկ) բանկային և առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման հիմնական (ընդհանուր) կանոններին և կանոնների Հավելված 1-ով սահմանված Ինտերնետ-բանկ համակարգով բանկային հաշվի էլեկտրոնային սպասարկման առանձնահատկություններին (հետայսու՝ Ընդհանուր Կանոններ), և հաստատում եմ, որ Ընդհանուր կանոնների դրույթներն ինձ հայտնի են և բացատրվել են լրիվ ծավալով, այդ թվում՝ կողմերի պատասխանատվությունը, էական պայմանները, Բանկի սակագները, դրանց չափերը և Ընդհանուր կանոններում ու Բանկի սակագներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու կարգը,
- Բանկին տրամադրված տեղեկությունները հանդիսանում են ամբողջական, հավաստի, իրականությանը համապատասխանող և դրանց որևէ փոփոխության դեպքում, ինչպես նաև գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի փոփոխության կամ իրական շահառուի ի հայտ գալու դեպքում պարտավորվում եմ տեղեկացնել Բանկին Ընդհանուր կանոններով նախատեսված կարգով և ժամկետներում,
- Ծանոթացել եմ «ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթղթի դրույթներին:

Ստորագրելով սույն Դիմում–պայմանագիրը հայտարարում եմ, որ .

- Իրավասու եմ ստորագրել և իրականացնել սույն Դիմում-պայմանագիրն առանց օրենքի, կամ պայմանագրային սահմանափակումների կամ այլ անձանց իրավունքների խախտման ,
- Սույն Դիմում-պայմանագիրն ուժի մեջ է և իրավաբանորեն պարտավորեցնում է ինձ ու պարտադիր է իմ համար,
- Ներկայումս չեմ զբաղվում և երաշխավորում եմ, որ ապագայում չեմ զբաղվելու որևէ արգելված գործունեությամբ,
- Համաձայն եմ, որպեսզի իմ անձնական (անհատական) տվյալները մշակվեն Բանկի կողմից,
- Տեղեկացված եմ, որ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը կամ դրա փոփոխությունները տրամադրելու ձևը իրականացվում է համաձայն բանկային հաշվի պայմանագրի:

Սույն Դիմում-պայմանագիրը կազմված, լրացված ու կնքված է հայերեն լեզվով, որի էլեկտրոնային տարբերակը Բանկի՝ customerservice@armbusinessbank.am, էլ փոստից կուղարկվի Հաճախորդի էլ. փոստի հասցեով: